

ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ¹⁾

IV

Կալւածատիրական հողերի ²⁾ մասին մեր նախնիքաց երեք յօդւածները նւիրւած էին կալւածատիրութեան և կալւածատիրական դիւղացիների վերաբերեալ օրէնսդրական ակտերին մինչ կայսերական ընկերիպտը առ 6-ն դեկտեմբերի 1846 թւականի Մեղանում հողային հանգամանքները խառնիճաղանձ են. Անդրկովկասը չի կազմել մի միակ պետութիւն, այլ նւաճել է Ռուսաստանի ձեռքով նւազ առ նւազ, այլ և այլ պետութիւններից՝ Վրաստանից, Պարսկաստանից, Տաճկաստանից և այլ և այլ խանութիւններից: Ռուսաց կառավարութիւնը, նւաճելով այլ և այլ նահանգներ, աշխատեց կարելիին չափ համակերպել հաստատւած հողային կարգերին և ոչ թէ մոցնել միակերպ հողային սահմանադրութիւն: Բայց նոյն իսկ համակերպելը դժւարութիւններ ունեցաւ, որովհետեւ մանաւանդ թրքա-հայկական նահանգներում հողային յարաբերութիւնները չէին սահմանւած դրաւոր օրէնքով և ոչ մի գիտնական հիմնաւոր ուսումնասիրութիւն չկար այդ խնդրի մասին, որը կարողանար ուղեցոյց ծառայել օրէնսդրութեան համար: Մնում էր ուրեմն, որ ժամանակով կառավարչական անձերը իրանք աշխատէին հասկանալ եղած դրութիւնը և դորա համեմատ ներդրօճէին օրէնսդրութեան վերայ:

¹⁾ Տեսնել «Մուրճ» 1889 թ. № 9, 1890 թ. №№ 7 և 9.

²⁾ Կալւածատիրական են կոչւում այն հողերը, որ բնակեցրած են և գտնւում են մասնաւորների տիրապետութեան ներքոյ. դոքա կալւածատէրերի հողեր են, գլխաւորապէս՝ ազնւականներին պատկանող:

Բայց Անդրկովկասի ագրարական ուսումնասիրութիւնը, որ արեցինք մինչ այժմ, ապացուցեց զոնէ որ մեր երկրի հողային սահմանադրութիւնները ոչ այլ ինչ են եղել, եթէ ոչ օրէնսդրական կարգով հաստատումն այն կարգերի, որ գոյութիւն են ունեցել մինչ ռուսաց տիրապետութիւնը կամ զոնէ ինչ ռուսաց կառավարութիւնը սխալ թէ ուղիղ ընդունել է իբր նախկին կարգեր:

Բայց դա բաւական չէ. նոյն այդ ուսումնասիրութիւնը մեզ համոզեց, որ, աշխատելով հաստատել եղած հողային կարգը, ռուսաց կառավարութիւնը մի քաղաքական դիտում է ունեցել, որով նա աւելի ևս հակել է հին կարգերը չը խախտելու գաղափարին: Այդ քաղաքական դիտումը կայացել է նրանում, որ կառավարութիւնը, խրախուսելով ազնւական կալաճատէր դասակարգը, ուղեցել է մեր երկրի մէջ ունենալ մի քաղաքականապէս յուսալի դասակարգ, որը երախտադիտական զգացմունքներով կապւած լինէր կառավարութեան հետ և իւր ազդեցութիւնը գիւղական դասակարգի վերայ գործ զնէր կառավարութեան դիտումների համաձայն: Ահա ինչու, հաստատելով խաների, բէգերի, աղալարների, միւլքադարների վերայ մեծամեծ կալաճներ, ռուսաց կայսր Նիկողայոս I, բեականոնով առ 6 դեկտեմբ. 1846 թ. հրամայեց այդ հողերը հաստատել նոցա վերայ ոչ իբրև հին իրաւունք, այլ իբր կայսերական շնորհք, իբրև պարգև:

Մեր այն ընթերցողներին, որոնք կամենում են մեր երկրի կալաճատիրական հողերի օրէնսդրութեանը մինչ 1846 թ. հիմնաւորապէս ծանօթանալ, յղում ենք մեր անցած երեք յօդաճներին. բայց աւելորդ չենք համարում, պատմութեան թելը շարունակելու համար, կատարւած ակտերի բովանդակութիւնը կարճաօտ աչստեղ առաջ բերել:

Ռուսաց կառավարութիւնը գտաւ մեր երկիրը անորոշ դրութեան մէջ երկրիս հողի տիրապետութեան, սեպականութեան և հողից օգուելու կարգ ու կանոնների նկատմամբ: Նա գտաւ մեր թրքա-հայկական զաւառներում թէ գիւղական դասակարգ և թէ հողերի բերքերից օգուող արտօնատէր դասակարգ՝ յանձին խաների, բէգերի, աղալարների, մուլքադարների և թիւուլի տէրերի: Կառավարութիւնը, երկրիս տիրապետութեան սկզբի տարիներում,

աշխատեց մի կերպ պահպանել եղած գրութիւնը, թոյլ տւեց որ բէգերը, աղալարները շարունակեն ոստիկանական դեր կատարել զիւզերում և ստանալ զիւզացիների մշակած հողերից՝ արդիւնքի որոշ մասը և վայելել զիւզացիների մի քանի անվարձ ծառայութիւնները: Այն բոլոր գաւառների համար, որոնք այժմ մտնում են Գանձակի ու Բաքուի նահանգների սահմանների մէջ, որպէս նաև Թիֆլիսի նահանգի Բորչալուի և Ղաղախի գաւառների համար, խաների, բէգերի և աղալարների այդ արտօնութիւնները սրբագործւեցին զենեքալ Երմոլովի 1818 և 1824 թթ. տւած կանոնադրութիւններով, իսկ Երևանի նահանգի կալւածատէրերի նկատմամբ՝ Պասկելիչի անունով բարձրագոյն տւած ընսկրիպտով առ 13 յուլիսի 1830 թ.:

1840 թ. 10 ապրիլի օրէնքի զօրութեամբ, երկրիս այժմեան հինգ նահանգներում, 1841 թւականից մոցւեց քաղաքացիական կառավարչութիւնը, որի առիթով այդ նահանգների քաղաքացիական հիմնարկութիւնների ընդլիան կատարւեց սենատոր բարոն Գանի ձեռքով: Նորա յայտնած կարծիքները հիմք ծառայեցին 28 մայիսի 1841 թ. օրէնքի, որով աղալարական դասակարգը իսպառ վերացւեց և զրկւեց այն բոլոր արտօնութիւններից, որ նա վայելում էր 1818 թ. կանոնադրութեամբ. դոցա փոխարէն կառավարութիւնը աղալարներին ապահովեց պենսիայով ցմահ, իսկ 11 հայկական զիւզերի մեկըներին զրկեց նաև այդ ապահովութիւնից: Բէգերին 1841 թ. օրէնքը աւելի խնայեց, ճանաչելով նոցա իրաւունքները, բայց ոչ իբր ժառանգական, այլ միայն ցմահ:

Բայց այդ օրէնքը տւեց միայն մօտ վեց տարի: Իշխան Միքայէլ Վորոնցովի Վովկասեան փոխարքայ նշանակելովը, 1846 թ-ին, հիմն ի վեր փոխւեցին հայեացքները այդ մասին: Հէնց նոյն այդ տարին, 2 ապրիլի 1846 թ-ի մի օրէնքով աղալարները և բէգերը ոչ միայն վերահաստատւեցին իրանց նախկին իրաւունքների մէջ, այլ և նոցա օգտին զիւղական ազգաբնակչութիւնը ստորացւեց մինչ ճորտութեան աստիճանը, ըստ օրինակին ռուսաց ներքին նահանգների կամ Վրաստանի:

Բարեբախտաբար Պետերբուրգի մինիստրական շրջանների կողմից զօրեղ ընդդիմադրութիւն եղաւ Վորոնցովին, այնպէս որ 2

ապրիլի 1846 թվականի օրէնքով ճորտ ճանաչւածը արդէն 6-ն դեկտեմբերի նոյն 1846 թվականի նոր օրէնքով ազատ գիւղացի ճանաչւեց: Բայց և այնպէս նիւթական տիրապետութիւնը երկրիս հողերի մի խոշոր մասի վերայ այնու ամենայնիւ ապահովեց թրքական բարձր դասակարգին: Եւ ահա գիւղացիներին ազատ դասակարգ ճանաչող, բայց թրքական ազնւականներին հողեր ապահովող և ոստիկանական իրաւունքներ տւող ծրագիրն է, որ հաստատուեց 6-ն դեկտեմբեր 1846 թ., որ և հիմք ծառայեց 20 ապր. և 28 դեկտ. 1847 թվականի հողային օրէնքներին:

2ը պէտք է մոռանալ, որ եթէ իշխան Վարանցովի հայեացքներին հակառակ էր 1846 թ. դեկտեմբերի 6-ի այդ օրէնքը, վերջինս այնուամենայնիւ նորա ծրագրի միայն մեղմացումն էր և նա իւր ազդեցութիւնը բանեցրեց օրէնքը կեանքի մէջ մտցնելիս, այսինքն աշխատեց, որքան միայն կարողացաւ՝ յօգուտ թրքական բարձր դասակարգի: Այդ մենք կը տեսնենք ներքև. բայց առհասարակ պէտք է շեշտենք, որ իշխան Վարանցովի կառավարութիւնը էպոխա է կազմում մեր ագրարական օրէնսդրութեան մէջ: Վարանցովը իւր ժամանակի ամենաազդեցիկ պետական անձերիցն էր, կամքի և սիստեմի տէր մարդ, յարած ազնւապետական կարգերին, հասարակ ժողովուրդը իսպառ մոռանալու տենդենցիաներով: Այլապէս նա չէր ուզիլ ճորտութիւն մտցնել մի երկրում, ուր նորա գոյութիւնը ապացուցւած չէր, մանաւանդ մի այնպիսի ժամանակ, երբ նոյն իսկ նախկին ճորտութեան երկրում, Ռուսաստանում, կառավարութիւնը ընդդէմ էր դորան: Իշխան Վարանցովի ազնւապետական խիստ շեշտւած ձգտումները վտանգաւոր էին մանաւանդ այն պատճառով, որ գիւղական դասակարգը իւր շահերը պաշտպանող յատուկ օրգաններ չունէր. չը կային երկրիս մէջ ազատ մամուլ, ինտելիգենտ դասակարգ, ժողովրդական գործիչներ և այլն: Միակ դասակարգը, որ մի այդպիսի ժամանակ կարող էր թէ գիւղական դասակարգը ճանաչել և բարեկամ լինել նորան և միևնոյն ժամանակ ազդեցութիւն ունենալ կառավարչական շրջանների վերայ, դա՛ հոգեւորականութիւնը պէտք է լինէր, թէ թուրք և թէ հայ հոգեւորականութիւնը: Բայց թուրք հոգեւորականութիւնը թրքական բարձր ազնւական դասակարգի դէմ ձեռնարկել որ և է բանի ան-

ընդունակ պէտք է լինէր. իսկ ինչ վերաբերում է հայ հողեւորականութեանը, նորա այն ժամանակեայ ծայրագոյն պետը, Ներսէս Մ կաթողիկոսը, վերջին ծայր ազնւապետական հակութենքով անձն էր, և իսկ և իսկ իւր ասածի մարդ պէտք է զուած լինէր յանձին Վորոնցովի Միւս կողմից պէտք է ենթադրել որ Ներսէս Մ ուղեցած լինի կառավարական տիրող հոսանքից օգտուել, և տեսնելով, որ Վրաստանում կաջ ազնւական մեծ դասակարգ, տեսնելով որ ռուս կառավարութիւնը ամեն կերպ աշխատում է թուրք ազնւականութիւնը ոչ միայն ճանաչել, այլ և զօրեղացնել, տեսնելով միւս կողմից որ միակ բուն հայկական ազնւականութիւնը—մեկիքները—շատ փոքրաթիւ է և թրջականից աւելի քիչ է նպաստում, տեսնելով այս ամենը, ասում եմ ես, շատ կարելի է որ Ներսէս Մ խիստ ձգտած լինի մի բան էլ շահել հայութեան համար, իւր ազդեցութիւնը գործ դնելով որ շատ տեղ հայերը հին ազնւականների սերունդ ճանաչեն կառավարութիւնից և նոցա վերայ էլ հողեր հաստատեն, թէկուզ ի մնաս գիւղական դասակարգի:

Չէ թէ գիւղական դասակարգի դատը պէտք էր իսպառ ձեռքից բաց թողնել թէկուզ այն փոքրին էլ հասնելու համար, որին Ներսէս Մ կարող էր իւր հեղինակութեամբ յաջողեցնել այդ գործում: Պէտք է կարծել որ այդ ժամանակներում գիւղացիների վերայ մեծ բռնութիւններ են գործ դրւել ազնւականների օգտին և որ եթէ մէկը հետամուտ լինի առանձին դէպքերի պատմութիւնները գրի առնել և հրատարակել,—նիւթի պակասութիւն էի ունենալ:

Իայց անցնենք բուն խնդրին:

Անդրկովկասի քաղաքացիական պատմութեան մէջ 6-ն դեկտ. 1846 թ. բեսկրիստը առաջնակարգ դեր է խաղում:

Այդ պատճառով մենք հարկ ենք դնում նորան ամբողջապէս առաջ բերել, Հրովարտակը ուղղած է իշխ. Վորոնցովին:

«Ի նշան Մեր առանձին ողորմածութեան և բարեհաճութեան դէպի խաները, բէգերը, աղալարները և Անդրկովկասի բարձր մահմդական դասակարգի ալլ անձերը, նոյնպէս և հալ մեկիքները, ցանկալով ամուր հիմքերի վրայ հաստատել նոցա վիճակը և դորանով նրանց միջոց տալ

կառավարութեանը օգտակար լինելու, Մենք, ձեր առաջարկի համաձայն, Ամենաողորմածաբար հրամայում ենք.

1) Բացի այն հողերից, որ Մենք նւիրել ենք խաներին, բէգերին, հայ մեկիքներին և այլ անձերին, առանձին ծառաւորութիւնների և քաջութիւնների համար, հաստատել իբր նոցա տոհմական (ПОТОМСТВЕН.) սեպհականութիւն բոլոր այն հողերը, որ նոցա տոհմերը ունեցել են երբ մասնադական երկիրները միացեցին Ռուսիայի հետ և որոնք ալժմ գտնուում են նոցա անվիճելի տիրապետութեան ներքոյ:

2) Բնակեցրած և ոչ բնակեցրած հողերը, որ 1840 թ-ից լետոյ խլւել են կալւածատէրերից մի քանիսից, ոչ լանցանքների համար և ոչ դատաստանական այլ կառավարական կարգով, վերադարձնել այն անձերին, որոնցից նոքա խլւած էին, կամ նոցա ժառանգներին և հաստատել իբր նոցա սեպհականութիւն, համաձայն առաջին կէտի:

3) Վրաստանի նախկին թրքական զիստանցիաների ազալարներին և նոցա ժառանգներին պարգեւել, իբր Մեր առանձին ողորմածութիւն ղէպի նոցա, այն բնակեցրած և ոչ բնակեցրած հողերը, որ առաջ նոցա օգտին էին ծառայում (ОБЫВШІЯ ВЪ ИХЪ ПОЛЪЗОВАНІИ) և որ նոցանից խլւեցին 1841 թ-ին, հաստատելով այդ հողերը իբր նոցա սեպհականութիւն (ВЪВЪЗНІЕ), նոյնպէս համաձայն ներկայ հրովարտակի առաջին կէտին:

4) Վերադարձնելով և հաստատելով այդ հողերը այն հողատէրերի վրայ, որ վիշւած են 2-րդ և 3-րդ կէտերում, դադարեցնել դրամական վճարումները, որ տրւում էին նոցանից մի քանիսին խլւած հողերի փոխարէն, չը դիպչելով սակայն պենսիաներին, որ տրւում են առանձին ծառաւորութիւնների համար:

5) Հողերը, որ խլւած են արքունիքի օգտին հողատէրերի լանցանքների համար, չը վերադարձնել նրանց և ոչ նոցա ժառանգներին առանց Մեր թոյլտուութեան:

6) Այն հողերի նկատմամբ, որ Մեր կառավարութեան ժամանակ միայն որպէս ցմա՜ կամ ժամանակաւորապէս օգտուելու համար տրւած են մի քանի բէգերին և մեկիքներին նոցա ծառաւորութիւնների համար, զուք պէտք է դիմէ Մեզ առանձին առաջարկով, թէ արդեօք նոցանից ումը թողնել որ շարունակեն ժամանակաւորապէս օգտուել. բայց այն հողերից նոքա, որ արդէն անցել են ժառանգներին և որոնց լարքունիս գրաւելու համար մինչ ալժմ որ և է կարգադրութիւն չի եղած, թողնել իբր նոցա տոհմային սեպհականութիւն:

7) Գիւղացիներին, որ ալժմ բնակւում են այլ և այլ անձերին պարգեւող կամ սոցա վրայ հաստատուող հողերի վրայ, թողնել նոցա ալժմեան բնակութեան տեղում, հաշւելով նոցա պետական գիւղացիների կարգին, Իրաւունքի Օրէնքների Համագումարի 9-րդ հատորի 628 — 632-րդ չօդ-

ւածներն հիման վրայ, հրատարակութիւն 1842 թ., Փոխարէն ալ և ալ կողմաների՝ ռալաթ, ռէշրար, խալիսէ, Նուքէր և ալն և ալն, ալդ գիւղացիներին տալ մի ընդհանուր անուն—միւլքեդեր—թարիդի.

8) Այս գիւղացիք պարտաւոր են լոգուտ հողատիրոջ ալ և ալ տուրքեր (ПОВИННОСТИ) տալ, նորա հողից օգտւելու փոխարէն, Բացի ալդ՝ (հողատիրոջն է թողնում գիւղացիների կարգապահութեան և բարեկերթութեան) БЛАГОУЧИЕ վրալ հսկողութիւնը և նոցա ոստիկանական կառավարութիւնը, Հողատէրերի և գիւղացիների փոխադարձ լարաբերութիւնները կ'որոշեն առանձին կանոնադրութեամբ ալն հիմունքների վրալ, որ ներկայումս Մեր կողմից հաւանութիւն են դառն.

9) Հողերը, որ ալ հրովարտակով Մեզնից հաստատւում են հողատէրերի վրալ իբր տոհմական, առհասարակ իրանց բոլոր պատկանելիներով և УГОДЬЯ-ներով, կազմում են կատարեալ սեպականութիւն հողատիրոջ, որը կարող է նոցա վրալ տնօրինել ընդհանուր օրէնքների հիման վրալ. Ալդ հողերը կարող են անցնել ժառանգաբար, պարգեւել, ծախել կամ ալ կերպ ձեռքից անցնել (БЫТЬ ОТЧУЖДАЕМЫ), բալց միալն ալնպէս, որ ալն անձը ում, սորա հիման վրալ, պէտք է անցնի հողը ի սեպականութիւն, կամ պէտք է պատկանի Անդրկովկասի բարձր մահմեդական դասակարգին և կամ պէտք է ունենալ ալն լատկութիւնները, որ անհրաժեշտ են, Սաւարութեան ընդհանուր օրէնքներիով, բնակեցրած հողեր ձեռք բերելու համար. Հողի ուրիշին անցնելովը նորա վրալ բնակող գիւղացիք մնում են դէպի նոր հողատէրը նոլն լարաբերութիւնների մէջ, ինչպէս դէպի նախկինը.

10) Հողատիրոջը, իւր ժառանգների մէջ կալքը բաժանելու համար, թող տալ, որ առաջնորդել, բացի Ռուսաց օրէնքներից, շարիաթի մէջ ալդ մասին եղած կանոններով, որպէս նաև աղաթով կամ տեղական սովորութիւնով.

11) Վախճանւած հողատիրոջ ժառանգներին իրաւունք տալ նրանից լիտով մնացած կալքը բաժանել շարիաթով կամ աղտթով միալն ալն ժամանակ, երբ դորա համար լինի նոցա մէջ ընդհանուր համաձայնութիւն. բալց և ալս դէպքում աղաթով բաժանելը պէտք է կատարել միալն միջնորդների միջոցով. սոցա վճիռների դէմ բողոքելը թող չը տալ.

12) Վէճերը, որոնք հողերը հաստատելիս կարող են ծագել ալս կամ ալն հողատիրոջ կամ արքունիքին պատկանելու մասին, քննել դատաստանական տեղերում, ընդհանուր հիման վրալ.

Այսպէս որոշելով խաների, բէգերի, աղալարների և հալ մելիքների հողատիրութեան իրաւունքների գլխաւոր հիմունքները, Մենք, իբր աւելի հաստատ նշան Մեր բարեհաճութեան դէպի նոցա, լանձնարարում ենք Ձեզ զբաղւել նոցա անձնական իրաւունքների որոշելու գործով, ալդ

կողմից Կարմարեւելով, որքան միայն կարելի է, այն իրաւունքներին, որ Կատկացրած են Ռուսիայի ազնւականութեանը: Ապա Մենք հաստատ հաւատացած ենք, որ Անդրկովկասի բարձր մահմեդական դասակարգը, ապահոված լինելով իւր գոյութեան միջոցների համար այն հողերով որ հաստատուած են նորա անդամների վրայ և որոնցից նոքա ալժմ օգտուած են, միշտ պատրաստ կը լինի, չը նախած հասակին և կարողութեան (состояние), առաջին կոչնակով ներկայանալ Մեր քաջ զինւորների շարքերում և խանդով ու եռանդով կատարել այն պարտականութիւնները, որ կը բարձեն այդ դասակարգի վրայ:

Յանձնելով ձեզ հրովարտակիւ մէջ բացատրած Մեր կամքը պատշաճաւոր կերպով ի կատար ածել, Մենք առ միշտ մնում ենք Մեր Կայսերական ողորմածութեամբ դէպի ձեզ անփոփոխ բարեհաճո:

Կառավարչական այդ ակտի մէջ առաջին անգամ օրէնքի խօսքով յայտնեց, թէ Թրքահայկական նահանգներում ձորտային իրաւունք գոյութիւն չէ ունեցած և գոյութիւն չունի: Այդ երևում է նախ նրանից, որ բարձր Թրքական ազնւականութեանը սեպհականութեան իրաւունք տրեց միայն հողերի և ոչ թէ զոյքի վերայ (имущество), ինչպէս այդ ծրագրել էր իշխան Վորոնցովը: Իսկ երկրորդ այդ երևում է նրանից, որ զիւղացիք, որոնք հաստատուած էին կալւածատէրերի հողերի վերայ, յայտարարեցին իբր պետական գիւղացիք (государственные крестьяне կամ госуд. поселяне), գործադրելով նոցա նկատմամբ Անձնական իրաւունքների IX-րդ հատորի 628—632-րդ յօդւածները (հրատարակութիւն 1842 թ. ¹), որոնցով որոշուած են զիւղական ազատ բնակիչների դասակարգային իրաւունքները:

Ապա նոյն այդ ակտով առաջին անգամ օրէնքով հաստատուեց մեր երկրում ժառանգական տոհմային հողի սեփականութիւնը (наследственная потомственная поземельная собственность). և թէև մի քանի դէպքերում, այն է՝ հողը ժառանգների մէջ բաժանելու դէպքում, Թոյլ էր տրւում շարիաթի կանոններով ղեկավարել, բայց հողային իրաւական չարաբերութիւնների սահմաններում՝ սովորութեան և մահմեդական իրաւունքի տեղը բռնեց ռուսաց օրէնքը:

Գիւղացիների պարտաւորութիւնները (повинности) յօդուած

¹) Томъ IX законовъ о состояніи, ст. 628—632, изд. 1842 г.

կալւածատէրերի որոշեցին միայն այնքանով, որքան պահանջում էր գիւղացիների կողմից կալւածատէրերի հողերից օգտուելու հանգամանքը, հետեւապէս ջնջելով բէզական և աղալարական նախկին իրաւունքները գիւղացիների անձնական ազատութեան վերայ:

Կալւածատէրերի վրայ պարտաւորութիւն դրեց աշխատելու չափահաս ամեն մի գիւղացուն հողաբաժին տալ: Գիւղացիների և կալւածատէրերի փոխադարձ յարաբերութիւնները դրեցին գրեթէ օրէնքի պաշտպանութեան ներքոյ:

Կայսերական ընկերիպօր առ 6-ն դեկտ. 1846 թ. այդ հիմքերը տեց կալւածատիրական հողային օրէնսդրութեան համար: Բայց պէտք էր այդ սկզբունքները գործադրել, և ահա ծագեցին դժարութիւններ: Բէզերի և աղալարների վրայ պէտք է հաստատւէին այն հողերը, որ նոքա ունեցած են եղել խանութիւնների ժամանակ, եթէ նոյն այն հողերը նոցա ձեռքումն էին 1846 թ. դեկտեմբերի 6-ին: Հարցեր ծագեցին 1) ինչպէս վարել այն հողերի հետ, որոնք բէզերի ձեռքումն էին, բայց որոնց համար արքունիքը վէճ ունէր. 2) ինչպէս որոշել այն բէզերի հողային իրաւունքները, որոնց հարկատու էին թափառող համայնքները, վճարելով նրանց որոշ հարկ չօփբաշի անունով, եթէ այդ համայնքները իրանց խաշների համար օգտուում էին միաժամանակ թէ մի քանի կալւածատէրերի և թէ արքունական հողերից. 3) ինչպէս ասպհովել այն բէզերին, որոնք հող չունէին, բայց օգտուում էին նրանց հարկատու գիւղացիների եկամուտներով, որոնք բնակւում էին քաղաքներում և կամ արքունական հողերի վրայ. 4) ինչպէս որոշել Նրեանեան նահանգի մուլքադարների և թիւուլի տէրերի հողային իրաւունքները, քանի որ նոցա տոհմերը երբէք չեն ունեցել իրանց տիրապետութեան ներքոյ բնակեցրած կալւածներ, այլ միայն օգտուում էին այն հողերի արքունական եկամտի մի մասից՝ ցմահ կամ ժառանգաբար, և 5) ինչպէս վարել Սխալցխալի դաւառի այն բնակեցրած հողերի հետ, որ բէզերը և ոչ արտօնատէր անձերը ձեռք էին բերել ոչ օրինաւոր ծանապարհով:

Այս գալիս էին հարցեր բէզական կալւածների կազմի մասին, և թէ ինչպէս նոցա հաստատել բէզերի վրայ, Գժարութիւնը այս-

տեղացն էր, որ մեր երկրում սակաւ է պատահում որ մէկի կալածքը ներկայացնէր մի կտոր հող, այլ մեծ մասամբ կալածքը ցրած է այլ և այլ տեղերում, կամ ընդմիջւած է լինում արքունիքի, եկեղեցու կամ գիւղացուն պատկանող հողերով:

Այդ խնդրի հետ կապւած էր նաև մի ուրիշ խնդիր, վերաբերեալ բէգերի դասակարգային իրաւունքներին, մի խնդիր, որ մինչ օրս էլ որոշ լուծում չի ստացել:

Նոր յարուցւած բոլոր խնդիրները ամփոփեցին այսպէս 1) բարձր թրքական դասակարգի անձերի և նոցա հողերում բնակւող գիւղացիների փոխադարձ յարաբերութիւնները. 2) բէգերի և աղտարների կալածալի իրաւունքները, 3) բարձր մահմեդական դասակարգի դասակարգային իրաւունքները:

Իշխան Վորոնցովի հայեացքներին շատ ձեռնտու եղաւ, որ 6-ն դեկտ. 1846 թ-ի րեսկրիպտի իրականացնելը այդպիսի դժւարութիւնների հանդիպեց. նա օգտուեց դրանից իւր առաջաջ ծրագիրը նորից առաջ բերելու, շատ շնչին խմբագրական փոփոխութիւններով: Նա առաջադրեց Կովկասեան Կոմիտետին մի ծրագիր, որի գլխաւոր հիմքը կազմում էր գիւղացիների հպատակութիւնը (ПОДЧИНЕНИЕ) կալածատէրերին: Իսկ գիւղական դասակարգը անանւած է ուղղակի ЧЕРНЬ (ամբոխ), հակառակ կալածատէրերին՝ որպէս բարձր դասակարգ (ВЫШШЕЕ СОСЛОВІЕ):

Իւր ծրագիրը իշխ. Վորոնցովը առաջադրեց 17-ն փետրւարի, իսկ լսեց Կովկասեան Կոմիտետից՝ 20 ապրիլի 1847 թւականի: Կոմիտէտը գտաւ որ այդ ծրագիրը կազմւած է հակառակ 6-ն դեկտ. 1846 թ. բարձրագոյն տւած րեսկրիպտի ոգուն, հետևապէս բաղմամբիւ նկատողութիւններով յետ դարձեց փոփոխելու և նորից ներկայացնելու համար: Այդպիսով կազմած ծրագիրը բարձրագոյն հաստատուեց 20 ապրիլի 1847 թ.:

Դա է Պոլտոժնիէն 20 ապր. 1847 թ.:

Այդ Պոլտոժնիէն բաղկացած է չորս գլխից և ընդամենը 46 չօղածներից: Մենք առաջ կը բերենք սոցա ամփոփ բովանդակութիւնը միայն: Առաջին գլխում խօսուում է գիւղացիներին հողաբաժին տալու մասին (5-ական դեսետին 15 տարեկանից վեր ամեն մի արական անձին),

Նրկրորդ գլխում որոշուում են այն պարտաւորութիւնները, որ պէտք է կատարեն գիւղացիք չօգուտ հողատէրերի, ալն է ա) մալահաթ (լեր-

քերից տասանորդ), բ) անձնական ծառայութիւն (որով ամեն 10 ընտանիք, հողատիրոջ պահանջմամբ, պէտք է նրան տան մի ծառայ արական սեռի, իսկ ամեն 15 ընտանիք — մի աղային)։ գ) բանւորական օրեր չօգուտ հողատիրոջ (ամեն ընտանիք պարտաւոր է հողատիրոջը տալ մի բանւոր, լծկան անասնով և գործիքներով հանդերձ, տարէնը 18 օր ձրի աշխատելու համար չօգուտ հողատիրոջ)։ դ) էւրէզ (համալեակաւ օգնութիւն չօգուտ հողատիրոջ, տարէնը երկու օր), ե) չոփբաշի կամ վճար տաւար արածացնելու համար, որով եթէ գիւղացին արածացնի որոշ քանակութիւնից աւելի տաւար հողատիրոջ հողերի վերայ, պէտք է վճարի վերջինիս ըստ հին սովորութեան) զ) թափառական բնակիչների դրամական տուրքերի մասին. այն է՝ կարածատիրական հողերում թափառող գիւղացիք, որոնք առանձին հող չեն ստացել հողագործութեան և ալգի-գործութեան համար, վճարում են հողատիրոջ ամեն մի ընտանիքի համար տարեկան չորս ուլբլի։

Սրբորդ գլխում որոշում են հողատէրերի և նոցա հողերում բնակւող գիւղացիների պարտաւորութիւնների և պատասխանատուութեան մասմասին։ Այդտեղ գլխաւորապէս որոշում են հողատէրերի ռաւիականական իրաւունքները. հողատէրը հսկում է ուր հողերի վրայ բնակւող գիւղացիների հանգստութեան և բարոյականութեան վրայ, վերահսկում է գիւղական ընտրւած դատաւորների վրայ և հաստատում նոցա. գիւղական տանուտէրերի համար, որոնք հաստատում են գաւառական վարչութիւնից, նախ քան նոցա հաստատելը, պէտք է վկայութիւն հողատէրից՝ նոցա արժանաւորութեան մասին։ Միւս կողմից հողատէրը պատասխանատու է իւր հողերում կատարւած անկարգութիւնների, գողութիւնների, սպանութիւնների համար. դորա համար նա իրաւունք ունի, աւազակներ հալածելու համար, գիւղացիներից զինւած մարդիկ հաւաքել։

Չորրորդ գլխումը որոշում են ալն պարտաւորութիւնները, որ ունեն Անգրիովկասի տեղական և գլխաւոր վարչութիւնները ներկայ Պոլսի թիւերի վերաբերմամբ։

Երեւանեան նահանգի և Ախալցխայի գաւառի հողատէրերի ու նոցա հողերում բնակւող գիւղացիների համար Պոլսի թիւերն առ 20 ապրիլի 1847 միաց իւր զօրութեան մէջ այն փոփոխութիւններով, որ բարձրագոյն հաստատուեցին 8-ն յունիսի 1852 թ.։

Ահա այդ փոփոխութիւնները։

Երևանեան նահանգում հողատէրեր կոչւում են՝

ա. Միւլքադարներ կամ միւլքի իրաւունք ունեցող, ալինքն ուլքեր որ իրանց պատկանող հողից ստանում են բերքի որոշ մասը։

բ. Տոհմական թիւակականներ, որոնց ժառանգաբար հասնում է հողի արդիւնքի մի մասը, որը իսկապէս արքունիքին պիտի հանձնէր։

գ. Յմա՛ թիուականներ, որոնց նոյն արդիւնքը հասնում է մինչ իրանց մահը:

դ. Աղալարներ, որոնք կառավարում են Երևանեան նահանգի Գովչալի (այժմ Նոր-Բալազդէղի) գաւառի գիւղերը, նման Վրաստանի նախկին թրքական դիտտանցիաների (Բորչալուի և Ղազախի) աղալարներին:

ե. Թափառական քուրդ ցեղերի տոհմական պետերը:

Ախալցխալի գաւառում՝

ա. Բլգեր, որոնք ունեն հողեր թափուի կամ չառլիկի իրաւունքով, ապինքն լիակատար տիրապետութեան իրաւունքով:

բ. Անձեր, որոնք հողեր ունեն կոսրիաթի իրաւունքով, ապինքն վկայութիւններով, որ ձեռք են բերած ռուսաց կառավարութիւնը Ախալցխալում հաստատելուց առաջ կամ չետով:

Դոցա կարգին են պատկանում նաև ալն անձերը, որոնք առանձին կտոր հողեր ունեն Երևանեան նահանգի միւլքաղարական կամ թիուական գիւղերում: Բայց, սեփականութեան իրաւունքից դուրս՝ նոքա ուրիշ արտօնութիւններ չունեն:

Արդ, ալս բոլոր հողատէրերի և սոցա հողերում բնակող գիւղացիների վրայ տարածւեցին նոյն կանոնները, ինչ կանոններ որ տրւեցին 20 ապր. 1847 թ., նախկին Շամախու և Դերբենդի նահանգների համար, մի քանի շեղումներով սակաւ:

Գիւղացիների հողաբաժնի չափ չը նշանակեց, ալ թողնեց չարմարել տեղին ու կարիքին: Բայց ինչ որ ունեն իրանց ձեռքում գիւղացիք—ալն պէտք է պահէր. ամեն մի աճեցութեամբ աւելացած արու բնակչին 15 տարեկանից անց՝ պէտք է բաժին տրւէր:

Տոհմական թիուականը հաւասարեցեց միւլքաղարի հետ:

Յմա՛ թիուականները չը պէտք է գիւղացիներից տոհման իրանց մասը, ալ պետական գանձարանից, նալած սորա դրութեանը: Թիուականի մահով նորա իրաւունքը վերջանում է, իսկ նրան չատկացած արդիւնքը դառնում է արքունական:

Գովչեան գաւառի աղալարները և Ախալցխալի բէգերը իրանց իրաւունքներով հաւասարում են միւլքաղարներին:

Քրդական ցեղապետները վալելում են առանձին իրաւունքներ, բայց հաւասարում են միւլքաղարների հետ, եթէ նոքա նստաբնակ դարձնեն իրանց հասարակութիւնները արքունական հողերի վերայ և վկայեն Անդրկովկասեան կառավարութիւնից իրանց եռանդի համար դէպի կառավարութիւնը, և հնազանդ լինեն:

Դաւով միւլքաղարներին տրւելիք տուրքերին, որոշեց, որ գիւղացիք նրանց տան հաղի բերքերի $\frac{1}{30}$ մասը, եթէ միւլքաղարը բացի հողից ուրիշ ոչնչով չի օգնում գիւղացուն:

Ախալցխայի գաւառի համար գիւղացու տալիքը հողատիրոջ որոշւեց բարձր կամ բերքերի մի տասերորդ մասը:

Իսկ անձնական աշխատանքների համար յօդուտ հողատէրերի և րեանեան նահանգում որոշւեց նոյնը, ինչ աղալարների համար 28 դեկտ. 1847 թ. օրէնքով, Ախալցխայի գաւառի համար նոյնպէս, այս զանազա-նութեամբ միայն, որ 8 օրւայ ձրի աշխատանքը ալգտեղ իշեցրւեց 6 օրւայ:

Փողով տուրքը որոշւեց 80 կոպ. յօդուտ միւլքադարի ալդիներից և բոտաններից ամեն մի 10 բաթման տարածութեան համար:

Նոյն գործի վերաբերեալ իշխ. Վորոնցովը ապա յարուցեց հարցեր, միշտ ձգտելով զրկել գիւղացուն յօդուտ կալածատիրոջ, թէև զտնելով ընդգիմագրութիւն Կոմիտէտի կողմից: Օրինակ նա առաջարկեց, որ գիւղացու տուրքը յօդուտ հողատէրի որոշւի ամե-նաշատը կէս մասը բոլոր հողային բերքերից: Կոմիտետը չհամաձայն-ւեց և որոշեց տուրքը $\frac{1}{10}$ մասը բերքերի. իսկ եթէ հողատիրոջ օգնութեամբ է գիւղացին մշակել և սերմանել— ըստ փոխադարձ համա-ձայնութեան, բայց երբէք ոչ աւելի քան $\frac{1}{5}$ մասը դաշտային բեր-քերից, իսկ այգիների, բրնձի և շերամի բերքերից՝ ոչ աւելի քան մի երրորդ մասը:

Մի այլ օրինակ իշխ. Վորոնցովը առաջարկել էր որ գիւղա-ցին մի կալածքից իրաւունք չունենայ անցնել մի ուրիշ կալա-ծատիրոջ հողի վրայ, բացի եթէ նա հողաբաժին չի ստացել և կամ բացի եթէ հաստատուի թէ նա հալածւում է հողատիրոջ կողմից և կամ եթէ նա ձեռք բերի հող ոչ պակաս քան 5-ական դեսետին իւր ընտանիքի ամեն մի արական սեռի հոգու համար: Կոմիտետը չը համաձայնւեց և որոշեց միայն, որ բնակութիւնը տե-ղափոխելու համար հարկաւոր է երկրիս գլխաւոր կառավարութեան (և ոչ կալածատիրոջ) թոյլտուութիւնը, տեղական վարչութիւնների վկայութիւնների համաձայն:

Իշխան Վորոնցովի առաջարկներից մէկը տեղի տւեց շատ եր-կար և ընդարձակ գրագրութիւնների և լուծւեց միայն 1856 թւա-կանին: Նա առաջարկել էր մի քանի հողատէրերին վարձատրել փոխարէն այն գիւղացիների, որոնք չենք բնակւում նոցա հողերի վրայ, բայց որոնք անձնապէս նոցանից կախած համարւելով՝ նոցա համար մի քանի պարտաւորութիւններ են կատարում:

Իշխան Վորոնցովի յարուցած միւս հարցերն էին՝ որ գիւղացի-

բանւորից հողատէրը, եթէ կարօտուածին չունենայ նորա ձրի աշխատանքին, փոխարէնը ստանայ ոչ թէ 10, այլ 40 կոպէկ ամեն բանւորական օրւայ համար: Կոմիտէտը որոշեց այդ մասին՝ փոխաքայի բարեհալեցողութեանը թողնել բարձրացնել այդ վարձատրութիւնը մինչ 20 կոպ. ամեն մի բանւորական օրւայ համար, կամ խնդիրը թողնել փոխադարձ համաձայնութեանը հողատէրերի և գիւղացիների մէջ:

Այդ հիմունքների վերայ կազմեցին և հաստատուեցին երկու նոր պոլոժենիներ, որ վերաբերում էին աղալարներին և նրանց վերադարձած հողերում բնակող գիւղացիներին: Այդ է պոլոժենին 28-ն դեկտ. 1847 թ.: Երկրորդ պոլոժենին վերաբերում էր այն հողերի գիւղացիներին, որոնք պատկանում են եղել և այժմ վերադարձած են Շամախու և Դերբենդի նահանգների բեգերին: Այդ պոլոժենին որ կազմեց 20 ապր. 1847 թ., լրացեց և հաստատուեց 5-ն օգոստ. 1852 թ.: Երրորդ օրէնքը պարունակում է բացառութիւնները ընդհանուր օրէնքի կանոններից, վերաբերեալ նախկին խանական ընտանիքների անդամներին:

Այս բոլոր օրէնքների և կանոնադրութիւնների և թէ այլ որոշումների ամփոփումը հետեւեալն է:

Հողերը բոլոր այն գիւղերում, որոնք համարւում էին խաների և բեգերի տիրապետութեան կամ աղալարների կառավարութեան ներքոյ, հաստատուեցին նոցա վերայ որպէս տոհմական սեփականութիւն, իսկ նոյն գիւղերի բնակիչները՝ որպէս պետական կամ ազատ գիւղացիք, օգուող հողատէրերի հողերից 5-ական դեսեատին ամեն արական հոգու համար 15 տարեկան հասակից սկսած. դորա փոխարէն այդ գիւղացիք պարտաւորւում են հատուցանել հողատէրերին հողի բերքի որոշ մասը և մի քանի անձնական ծառայութիւններ անել ¹⁾: Հողատէրերին թողած էր ոստիկանական հսկողութիւնը գիւղացիների վրայ իրանց հողերի սահմաններում. գիւղա-

¹⁾ 1861 թ. 26-ն Նոյեմբ. բարձրագոյն հրամանով աղալարները ազատեցին կամ, աւելի լաւ ասած, զրկեցին գիւղերի կառավարութեան պաշտօնից, իսկ գիւղացիք ազատեցին համալսական ծառայութիւնից (էրէզ) լօգուտ աղալարների:

ցիք, իրանցից ընտրած մարդկանց միջոցով վճռում են և կատարում դատաստանական թեթեւ գործեր, հողատիրոջ հաստատութեամբ: Տեղական ոստիկանութեան վրայ պարտաւորութիւն դրւեց հողատէրերին օգնել սոցա պահանջների համար:

Վերոյիշեալ կանոնադրութիւնները գործադրելու համար կազմեցին երեք յանձնաժողովներ՝ Թիֆլիսում, Շամախում և Դերբենդում: Այդ յանձնաժողովները յարուցեցին գործնական մեծ դժուարութիւններ այլ և այլ խնդիրների վերաբերմամբ, շատ բանում անձեռնհաս համարելով իրանց. նոցա վերջնական վճիռները տրւեցին Կովկասեան Կոմիտետի կողմից:

Նշանաւոր հարգամանքներից մէկը սա է, որ աշխատաւոր հասակի ամեն մի զիւղացուն 5-ական դեսեատին հող տալը չիրագործւեց, որովհետեւ ինչպէս բացատրում էին այն ժամանակ, մանաւանդ այգեգործական, շերամապահական և բրնձամշակ տեղերում ոչ այդքան հող կար և ոչ էլ մի մարդ այդքան հող մշակել կարող էր: Այդ պատճառով վճռեց թողնել զիւղացիների հողաբաժինը այնպէս, ինչպէս կար առաջ, իսկ մինչ 5-ական դեսատին լրացնելը թողնել մինչև որ հողերը կը չափւեն (меребание):

Այդ կէտը շատ նշանաւոր էր: Պէտք է իմանալ, որ հողերի չափելը սկսեց մեր երկրում 1847 թւականից շատ ուշ, այն է միայն 60-ական թւականներին, այն էլ շատ դանդաղ կերպով, և մինչ օրս էլ նա չարունակւում է: Ուրեմն զիւղացիների սպասելը դեռ պէտք է շատ տարիներ տւէր:

Բայց պէտք է իմանալ որ կառավարութեան ծրագրի մէջ հաստատ մտնում էին այս երկու մտադրութիւնները՝ մէկ կողմից զիւղացուն հողով ապահովելը, միւս կողմից՝ բարձր ազնւական հողատէր դասակարգ ստեղծելը կամ եղածը պահպանելը, և թէ ինչ արտօնութիւններով—այդ արդէն տեսանք:

Բայց այդ երկու զիտաւորութիւններից իսկապէս որն էր աւելի անկեղծ: Պարզ է որ հողատէրերի դիրքը բարձրացնելն էր զխաւորը և ոչ զիւղացուն ապահովելը, թէև իրաւապէս հողատիրոջը այնքան մեծ արտօնութիւններ տալը հիմնւած էր զիւղացուն որոշ տարածութեամբ հողաբաժին տալու վրայ: Բայց հէնց որ դժուարութիւններ եղան ամեն տեղ հաւասարապէս 5-ական

դեսիատին հող տալը գիւղացուն, իսկոյն վճռւեց այդ խնդիրը թողնել, չը գործադրել 1847 թւականի հողային օրէնքի այդ նշանաւոր պահանջը: Բայց դորա համեմատ պակասեցին արդեօք հողատէրերի արտօնութիւնները, ինչպէս այդ կը պահանջէր լոգիկան և արդարութիւնը? Ամենեւին ոչ. հողատէրերը շարունակեցին նոյնքան տուրքեր ստանալ և գիւղացիներից նոյնքան անձնական ծառայութիւններ պահանջել, ինչքան նոքա պէտք է պահանջէին, եթէ իրանց հողերից գիւղացիների օգտին որոշ բաժին տային:

Առարկութիւնը, թէ այգեւէտ և բրնձամշակ տեղերում ամեն գիւղացու 5-ական դեսետին հող տալը անհնարին է, չէր կտրող ամբողջ խնդիրը թաղել. քննւեց արդեօք թէ ինչքան հող ունէին գիւղացիք հէնց այդ տեսակ տեղերում, և հնարաւորութիւն չկար արդեօք 5-ականի տեղ աւելի քիչ հող տալ նրանց, ովքեր շատ քիչ հող ունէին, կամ ամենեւին հող չունէին? Ոչ, այդպիսի քննութիւն չեղաւ այդ ժամանակ:

Այսպիսով գիւղացի դասակարգի օգտին 1847 թւականի օրէնքներով և յետովայ որոշումներով նոր ոչինչ չը կատարւեց, այլ միայն հաստատւեց այն ինչ կար առաջ, խանական կառավարութիւնների ժամանակ. թերեւ մի քանի թեթեւութիւններ զգացին Ղարաբաղի խանական ու բէգական գիւղացիք, որոնց տուրքերը շատ աւելի էին, քան 1847 թ. պոլոժենիեյում յիշածները: Բայց այդ բաւական չէր. գիւղացին ոչ միայն ոչինչ չը ստացաւ այդ գրւած օրէնքի շնորհիւ, այլ և տուժեց: Եւ ահա ինչու: Առաջ նրա համար գրւած օրէնք չը կար, այլ ինչ ունէր և ինչ պարտաւոր էր անելու յօգուտ հողատիրոջ՝ այդ բոլորը լինում էր հաստատւած սովորութեան հիման վերայ. ինչ սովորութիւն չէր— օրէնք չէր: Բայց հիմայ հողատէրերի պահանջները սկսեցին կրել դրական իրաւունքի բնաւորութիւն, գրւած օրէնքի հիման վրայ, օրէնք, որի լեզուն գիւղացին ամենեւին չէր հասկանում: Հողատէրը խիստ պահանջում էր այն, ինչ օրէնքով իրան պէտք է հասնէր, բայց այն օրէնքով, որի անունից նա կարող էր պահանջել աւելի քան որոշւած էր, և ոչ միայն որովհետեւ գիւղացին ստիպւած էր, իւր անգրագիտութեան պատճառով, կուրօրէն հաւատալ, այլ և այն պատճառով, որ պահանջող հողատէրը էր միևնոյն ժամանակ

և զլիաւոր ոստիկանը իւր հողի սահմաններում, նոյնպէս զբաւած օրէնքի հիման վրայ: Գիւղացուն իրաւունք էր տրւած հողատիրոջ ապօրինի հարստահարութիւնների համար զսնդատով դիմել իշխանութեանը, այն է ընդհանուր ոստիկանական հիմնարկութիւնների: Բայց ապացուցւած է, որ դժբա անսպասան հրաժարուած էին այդ գործից, թողնելով որ բէգերը և աղալարները ինքնակամ աէրութիւն անեն իրանց կալածեներում:

Ամեն մի կողմի պարտաւորութիւնները ճանաչել տալու համար հարկաւոր էին ոչ թէ ընդհանուր ոստիկանական, այլ յատուկ գիւղացիական հաստատութիւններ, որ այն ժամանակ չը կային մեր երկրում:

Այս ամենը լրացնելու համար պէտք է ասել, որ 1847 թ. հողային կանոնադրութիւնները դործ դրւեցին ոչ բոլոր նահանգներում, այլ Ղազախում և Բորչալուումը և այն ժամանակաց Շամախու և Գերբէնդի նահանգներում, բացառութեամբ Ղուբայի գաւառի, ուր հողատէրերի և գիւղացիների փոխադարձ յարաբերութիւնների համար զեներալ Երմոլովի 1818-ին տւած հրահանգը պահպանեց իւր զօրութիւնը: Բայց այն էլ ինչպէս գործադրեց, կ'երևայ հետեւեալից:

Հողերի պատկանելիութեան և պոլոժենիների գործադրութեան համար երեք յանձնաժողով կազմեցին՝ Թիֆլիսում, Շամախում և Գերբէնդում, որոնք գործում էին իշխ. Վորոնցովի տւած հրահանգներով և նորա անձնական հսկողութեան տակ: Թիֆլիսին՝ աղալարների համար էր և այսպէս վարեց՝ բոլոր աղալարական գիւղերի հողերը բաժանեց 14 մասի, որոնցից 10-ը յատկացրեց աղալարներին, 3-ը նոցա ազգականներին, մի մասը — ոչ աղնական օձիցներներին, 4-ը չինովնիկներին (պետական ծառայող): Իսկ ինչ վերաբերում է նախկին Շամախու (այժմ Բաքու) և Գերբէնդի նահանգներին, հողերի պատկանելիութեան խնդիրը շատ աւելի կ'նձռոտ բնաւորութիւն ստացաւ, զբաւոր կամ հաստատ վկայութիւնների պակասութեան պատճառով. հարց էր թէ արդեօք իրանց բէգ համարողներից ովքեր իսկապէս բէգ են եղել այդ երկիրները նւաճելու ժամանակ և թէ ինչ սահմաններում են նոցա անվիճելի հողերը, որոնց համար մի նախապատրաստական տեղեկագիր, կալւածների նկարագրութիւն-

ներով հանդերձ, առաջին անգամ կազմել էին դեռ ևս 1819 — 1826 թ. Արվերդով և Մոգիլեովսկի։ Հին ու նոր բոլոր տեղեկութիւնները և նիւթերը մշակեցին 1) որոշելու համար ամեն մի բէգի հողի սահմանները, 2) թէ ինչպէս հաստատել հողերը նոցա վերայ և 3) թէ ինչպէս վճուել վիճելի հողերի խնդիրները։

Այս բոլոր հարցերը քննեցին միայն դեկտեմբերին 1861 թ. և մարտին 1864 թ.։

1861 թ. դեկտեմբերին կայացրած վճիռներից և մշակած կանոններից և ոչ մէկը դործադրութիւն չը ստացաւ. այդ պատճառով նոցա վրայ կանգ առնելը աւելորդ է, բացի երկու խնդիրներից, որոնք պրինցիպիական կարևորութիւն են ներկայացնում։ Մէկը այն էր թէ արդեօք ինչ եղանակով պէտք է հողերը հաստատուն բէգերի վրայ՝ կառավարչական (ադմինիստրացիական) կարգով թէ սահմանափական ատեանների միջոցով, որ միայն այդ ժամանակ նոր բացել էին մեր երկրում և որոնք պատկանում էին դատաստանական բաժանմունքին։ Փոխարքայի խորհրդում անդամների մեծամասնութեամբ այդ հարցը վճուեց միայն 1864 թւականին առաջնի մոքով, հիմնւելով այն բանի վերայ, որ հողերը տրւում են բէգերին ոչ որովհետեւ նոցա սեփականութիւնն է, այլ տրւում են միայն որպէս առանձին կայսերական շնորհ. հետեւապէս դատաստանը կարող է խառնուել այդ գործում միայն վէճերի աւելթով, որ կարող են ծագել ապագայում, կառավարութեան ձեռքով հողերը բէգերի վրայ հաստատուելուց յետոյ։—Երկրորդ խնդիրը սա էր, թէ քանի որ 10 տարւայ անվիճելի տիրապետութիւնը հնու թեան օրէնքով (давность) սեփականութիւն է ստեղծում, պէտք է արդեօք հողերի պատկանելութեան խնդիրը այդ հիման վերայ վճուել թէ ոչ։ 1864-ին այդ հարցը վճուեց այս մոքով, որ հնութեան օրէնքը այս դէպքում գործադրելի չէ, այլ նա զօրութիւն կը ստանայ միայն ապագայի համար, 1846 թւականի հրովարտակը ամբողջապէս իրագործելուց յետոյ։ Չէ որ 1846 թւից դէս արդէն տասից աւելի տարի էր անցել, և եթէ հնութեան օրէնքը գործադրւէր՝ այլ ևս վիճելի խնդիր չէր մնալ։

Այդ հիմունքների վրայ, և նոր նորից բէգական ընտանիքների և կալւածների ցուցակները քննելուց յետոյ, Կովկասեան փոխար-

քայ մեծ իշխան Նիկողայ Նիկողայեւիչի իշխանութեամբ հաստատուեցին բէգերի իրաւունքները հողերի վրայ, որոնց համար այդ գործին ծառայող յանձնաժողովների (կոմիսիա) արձանագրութիւնները վճիռների զօրութիւն ստացան. իսկ այդ արձանագրութիւնների հիման վրայ արդէն տրւեցին վկայաթղթեր, համաձայն ղեռ. և 16 օգոստ. 1852 թւականի կայացրած վճռի՝ վկայաթղթեր տալու ձևի մասին: Այդ վկայաթղթերում նշանակւած էր, թէ արքունիքը հրաժարւում է արդեօք հողերից, թէ իրաւունք է պահում մինչ տասը տարի պահանջ ներկայացնել: Հողերի սահմանները այդ վկայաթղթերում չը նշանակեցին, մինչև որ սահմանաչափական կարգով նոքա չորոշեն, արքունիքը իրան վերապահելով այդ միջոցին իւր պահանջներն անելու:

Արքունիքի այդ վերապահումները որպէս նաև Երևանեան նահանգի մնացած գործերը պէտք է հետեցնէին բարձր մահմեդական դասակարգին պատկանելու իրաւունքների նոր քննութիւնը: Դորա համար հաստատուեցին չորս բէգական յանձնաժողովներ՝ Թիֆլիսում, Երևանում, Շուշում և Բաքուում: Փոխարքայի տւած հրահանգով ամենազլխաւոր նշանը բարձր դասակարգին պատկանելու համար պէտք է ծառայէր այն իրողութիւնը, թէ արդեօք ընտանիքը, որին պատկանում է որոշ անձը, ունի բնակեցրած հող թէ ոչ: Բայց այդ գործը մինչ օրս էլ դեռ իւր վերջնական լուծումը ստացած չէ:

Այսպիսով ուրեմն մենք տեսնում ենք, որ 1846 թ-նի հրովարտակի ձևական իրագործումը պահանջեց մինչ երկու տասնեակ տարիներ: Եւ շտապելու էլ իսկապէս մեծ հիմք չը կար կարծես ինչ եւանդ և ոգևորութիւն կարող էր ներշնչել հին կարգերը ամրացնելու գաղափարը: Եւ ահա հազիւ 1846-ի հողային օրէնսդրութիւնը վերջնական սանկցիա ստացաւ, արդէն չարուցւեց նոր ռեֆորմի միտքը, որ և առաջացրեց ցալժա՝ իշխող 1870 թւականի հողային օրէնսդրութիւնը, որին և կ'անցնենք զալ անդամ: